ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

06 մարտ 2024, № 12/1

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԼԱՎԱՐԿՄԱՆ) ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ /ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ/ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՇՊՀ Գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման (լավարկման) և հաշվետվողականության ապահովման /նոր խմբագրությամբ/ հայեցակարգ-ում 5.2 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2 Հիմնադրամի յուրաքանչյուր կենտրոն գործունեության ամենամյա հաշվետվության մեջ, որպես առանձին բաժին, ընդգրկում է իր ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողականը, որին կից պատրաստվում է հարակից զեկույց՝ ռեկտորի հրամանով ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից: Ժամանակավոր հանձնաժողովի կազմում ընդգրկվում են բոլոր կենտրոնների տնօրենները՝ բացառությամբ հաշվետվությունը ներկայացնող կենտրոնի տնօրենի, ինչպես նաև Որակի ապահովման բաժնի պետը, Ուսանողական խորհրդի նախագահը և Ուսանողական գիտական ընկերության նախագահը»:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ե. ՍԵՐՈԲՅԱՆ